

Գուրգեն Մահարի

Հաշտություն

Ես գիտեմ՝ ոչ մի, ոչ մի ծաղիկ
Իմ արցունքով չէ, որ ապրում է,
Էլ ինչի՞ս է պետք մուժ ու թախիծ,
Էլ ինչիս է պետք քո համբույրը…

Ես շատ սիրեցի և շատերին,
Դահիճ եղա ոմանց ու ոմանց զոհ,
Ինձ մեղմ օրորեց փշատենին,
Ու ջուրը երգեց քաղցր ու գոհ:

Ու ես ասում եմ, ասում եմ այժմ,
Խաղաղությո՛ւն ձեզ, օրեր անցած,
Ես իմ դեմ եղա այնքա՛ն դաժան,
Գործեցի իմ դեմ այնքա՛ն հանցանք…

Բայց նայում եմ ես նոր աշխարհին,
Այդ նա՛ է,– երգըս, որ հնչում է…

– Ես գիտեմ, ես գիտեմ՝ ոչ մի ծաղիկ
Քո երգերով չէ, որ շնչում է…

***

Մահից ես վախ չունեմ,
Իմ անունը վկա,

Յատուկ Պոէմ

Մեռնելու պես հին գործ
Ու հին արհեստ չկա,
Բայց մեր մահից հետո
Դժվար մահն է գալիս,
Մեր երգերի ահեղ
Դատավորը կգա…